թութիւն ընդդէմ թշնամեաց ի փառս Մեծին Ռուսիոյ, զի հաստատեցի խաղաղութիւն մշտատև յերկրի և արդարութիւն ի մէջ ազգաց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Ի 5 յունիսի 1915 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՃԿԴ
ի Հայրապետութեան Մերում Դ. ամի
Աբրահամեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 968

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ալէքսան Վերդիեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների տասն և եօթ (17) ռուբլին, առաջադրելով մոց մատեանում մուտք գրել և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 4 մայիսի, թ. 786։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետերբուրգի Հայկական հիւանդանոցի Յանձնաժողովի Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի միջոցով ուղարկած յօգուտ հայ գաղթականների երեք հարիւր (300) ռուբլին, առաջադրելով մուծել մոց մատեան և անդորրագիրն ուղարկել յիշեալ Յանձնաժողովին։ 4 մայիսի, թ. 787։

Դիւանի գրութիւն Վրաստանի թեմական Առաջնորդի անունով, որով առաջադրուեց յայտնել Գանձակեցի Վասիլ Անանեանին Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցուն նուիրած մի ջանի համար։ 4 մայիսի, թ. 789։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան ոչ. Նիկողայոս Առաքելեանի անունով՝ Բագուի ս. Լուսաւորիչ եկե-

դեցու բակում իւր ծախքով երկյարկանի շինութիւն կառուցանելու առթիւ՝ իւր վաղամեռիկ դստեր յիշատակը յաւերժացնելու համար։ 4 մայիսի, թ. 790։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Տփխիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան անունով Նորին Սրբութեան նուիրած «Վասպուրականի հայերէն ձեռագրերի ցուցակը» գրքի առթիւ։ 5 մայիսի, թ. 792։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Լոնդոնից պ. Արամ Բաֆֆու ուղարկած յօգուտ դպրոցական ֆոնդի երեսուն և եօթ ռուբ. 29 կոպ. (37 ռ. 29 կ.), առաջադրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 7 մայիսի, թ. 798։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին բժշկապետ Կարապետ Ազաջանեանի Մ. Ութոռի հիւրընկալի միջոցով ուղարկած յօգուտ հայ գաղթականների քսան և հինգ (25) ռուբլի, առաջադրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 7 մայիսի, թ. 799։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եորքի Տիկնանց Եկեղեցական Միութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հարիւր տասն և երկու ռուբ. 11 կ. (112 ռ. 11 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 7 մայիսի, թ. 800։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եկատերինոդարի Հայոց Կանանց Յանձնաժողովի յօգուտ գաղթականների ուղարկած հինգ հարիւր տասն և վեց ռուբ. 88 կոպ. (516 ռ. 88 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 820։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ազգային Պաշտպանութեան Յանձնաժո-

գովի հայ «Հնչակեան» կամաւորների օգտին ուղարկած երեք հազար երեք հարիւր իններեւն երեք ռուբ. (3393 ռ.), պատուիրելով մատեան մուծել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 821։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բոստոնից Կարնոյ Ուսումնասիրաց Ընկերութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականների չորս հարիւր վաթսուն ռուբ. 30 կ. (460 ռ. 30 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 822։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ունսադէտ քաղաքի Յանձնախմբի ուղարկած յօգուտ հայ կամաւորների վեց հարիւր երեսուն և ինն ռուբ. 11 կոպ. (639 ռ. 11 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 823։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եկատերինոդարի աղջկանց գիմնազիայի աշակերտուհիների փոխադրած յօգուտ հայ գաղթականների չորս հարիւր (400) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 824։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Օդեսայից Ա. Ե. Կոլլիոդիսայի փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հարիւր երեսուն երեք (133) ռուբլի, պատուիրելով մատեան մուծել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 825։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնելով Սինոդին Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Արսէն ծ. վարդապետ Վեհունու և Սուազլիի փոխադրած տասն և մի հազար վեց հարիւր քսան և եօթ ռուբ. 50 կ. (11,627 ռ. 50 կ.), պատուիրուեց մատեան մուծել այդ գումարի կէսը յօգուտ հայ կամաւորների, իսկ կէսը՝ հայ գաղթականաց

և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մայիսի, թ. 826։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Առաջնորդի ուղարկած յօգուտ հայ գաղթականների երկու հարիւր վաթսուն եօթ ռուբ. 50 կ. (267 ռ. 50 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 մայիսի, թ. 843։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադի Ռուսական արտաքին առևտրի դրամատան միջոցով ստացուած Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքի Էկոպրես Ընկերութիւնից յօգուտ հայ «Հնչակեան» կամաւորների տասն և մի հազար հինգ հարիւր քառասուն (11,540) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 մայիսի, թ. 845։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մերվի Կանանց Կոմիտէի տիկին Ադամեանի միջոցով փոխադրած յօգուտ հայ գաղթականների եօթ հարիւր (700) ռուբլի, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 մայիսի, թ. 846։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Վերնա քաղաքապետի միջոցով ստացուած յօգուտ հայ գաղթականների վեց հարիւր տասն և վեց ռուբ. 87 կ. (616 ռ. 87 կոպ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 մայիսի, թ. 47։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Գարեգին վարդապետի անունով, որով կարգուեց ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր ճեմարանի Տեսուչ։ 16 մայիսի, թ. 871։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի

Նախագահի մայիսի 2-ի յայտարարութեան վրայ. «Հաստատում ենք ի գործադրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի 1915 թ. ապրիլ 26-ին կայացած Ա. Նիստի արձանագրութեան մէջ յիշատակուած որոշումները մի հարիւր քսան և մի հազար (121,000) ռուբլու նախահաշուին վերաբերեալ։ Միանգամայն լիայոյս ենք, որ Մեր անմիջական հսկողութեան և հովանաւորութեան ներքոյ գտնուած Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովը տնտեսաբար կգործադրի նախահաշուով որոշած գումարները Ալաշկերտի փախստական-գաղթականների վերադարձի և նրանց տնտեսութիւնը բարւոքելու համար, ի նկատի ունենալով, որ Ծաճկահայ, Պարսկահայ և Ռուսահայ փախստական-գաղթականների թիւը չափազանց շատ է և Ծաճկա-Հայաստանից գաղթականական հոսանքը դեռ կանգ չէ առնում, այլ աւելի և աւելի ծաւալում է երկրում և կարիքի չափը մեծանում, մինչդեռ մեր ունեցած միջոցները անբաւական են»։ 18 մայիսի, թ. 872։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին գաղթականների գումարից երեսուն հազար (30,000) ռուբլի՝ գաղթականների կարիքները հոգալու համար։ 18 մայիսի, թ. 873։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Լուգանսկի ծխական Հոգաբարձութեան յօգուտ հայ գաղթականների ուղարկած ինն հարիւր իններորդ և ինն ռուբ. 60 կ. (999 ռ. 60 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի, թ. 874։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ռուսաստանի թագական Խորհրդի փոխադրած յօգուտ հայ գաղթականների չորս հազար (4000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի։ թ. 875։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լոնդոնի Ռուսաց Հիւպատոսի միջոցով փոխադրած վեց հազար ութ հարիւր երեսուն և չորս ռուբ. 65 կոպ. (6834 ռուբ. 65 կոպ.), պատուիրելով մուծել մատեան այդ գումարի կէսը յօգուտ հայ գաղթականների, իսկ մնացած կէսը՝ յօգուտ հայկական Կարմիր Խաչի Ընկերութեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի, թ. 876։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Վաշինգտոն քաղաքից Կարապետ Կայայեանի փոխադրած երեք հարիւր ութ ռուբ. 57 կոպ. (308 ռ. 57 կ.), պատուիրելով մուծել մատեան այդ գումարի կէսը յօգուտ հայ կամաւորների, իսկ միւս կէսը՝ յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի, թ. 877։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Երևանի Վոլժսկո-Կամսկի բանկի միջոցով Լոնդոնից փոխադրած վեց հազար ութ հարիւր չորս (6804) ռուբլին յօգուտ գաղթականաց և պատուիրուեց մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի, թ. 878։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Օդեսայի Հայոց Յանձնաժողովի փոխադրած յօգուտ հայ գաղթականների երկու հազար (2000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի։ թ. 879։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Երևանի Վոլժսկո-Կամսկի առևտրական բանկի միջոցով Լոնդոնից փոխադրած յօգուտ հայ գաղթականների երեք հազար հինգ հարիւր եօթանասուն և երեք (3573) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 մայիսի, թ. 880։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգա-

դիր Ցանձնաժողովին վճարել Երևանի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովին գաղթականների գումարից տասն և չորս հազար (14,000) ռուբլի։ 18 մայիսի, թ. 886։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի ներկայացրած չորս հարիւր տասն և մի ռուբ. 22 կոպ. (411 ռ. 22 կ.), որ ստացել է զանազան տեղերից, պատուիրելով մուտք գրել մոից մատեան յօգուտ գաղթականաց և անդորրագրերն ուղարկել իւրաքանչիւր գումար փոխադրողին։ 21 մայիսի, թ. 895։

Նորին Սրբութեան մակագրութիւնը Հայկական 6-րդ դրուժինայի հրամանատարի օգնական Տ. Աղաջանեանի խնդրի վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին Մեր տարեւոյս մարտի 24-ի թ. 484 մակագրութեամբ Սինոդ յանձնած և յօգուտ գաղթականաց մուտք գրուած տասն և մի հազար երեք հարիւր հինգ (11,305) ռուբլին, որ փոխադրուած է Ամերիկայի Բոստոն քաղաքից, մուտք գրել յօգուտ «Հնչակեան» կամաւորների և անմիջապէս փոխադրել Տփխիս «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանին ըստ պատկանելոյն հասցնելու համար»։ 22 մայիսի, թ. 898։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Աղէքսանդրիայի (Եգիպտոս) Հայուհեաց Կարմիր-Խաչի Ընկերութեան Ատենապետ Զարուհի Գալֆայեանին, որ հայ կամաւորների օգտին ժողոված ներքնազգեստները կարող են ուղարկել Օդեսա՝ Յովհաննէս աւագ քահանայ Զուբարեանին և կամ Բաթում Մեսրոպ աւագ քահանայ Մելեանին։ 25 մայիսի, թ. 906։

Նորին Սրբութեան մակագրութեամբ՝ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Նոր-Նախիջևանի Մեծ Սալա գիւղի Հայկական Ցանձնաժողովի ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի միջոցով ուղարկած չորս հարիւր տասն և եօթ ռուբ. 77 կ. (417 ռ. 77 կ.), պատուիրելով մուծել մոից մատեան յօգուտ գաղթակա-

նաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մայիսի, թ. 908։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդ Վարշաւայից՝ Արմահամանի փոխադրած երեսուն և ութ ռուբ. 87 կոպ. (38 ռուբ. 87 կ.), պատուիրելով մուծել մաքից մատեան յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մայիսի, թ. 909։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Վլադիկաւկազից բժիշկ Ղասումեանի ուղարկած մի հազար հինգ հարիւր (1500) ռուբլին, պատուիրելով մուտք գրել յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մայիսի, թ. 910։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայի Հայոց Հոգևոր Կառավարութեան փոխադրած երեսուն և չորս ռուբ. 22 կոպ. (34 ռ. 22 կ.), պատուիրելով մուտք գրել յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մայիսի, թ. 911։

Դիւանի գրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին Գրիգորիոպոլից Նորին Սրբութեան անունով ուղարկած երեք կապոց շորերը գաղթականների օգտին։ 26 մայիսի, թ. 912։

Դիւանի գրութեամբ յայտնուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին, որ Պետրոգրադի Հայոց Բիւրոյի կողմից ներկայացուցիչ է ընտրուած Երևանցի պ. Գէորգ Ամիրեանը, որը մասնակցելու է Յանձնաժողովի նիստերին։ 26 մայիսի, թ. 914։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ամերիկայի Ռիչմոնդ քաղաքից Մ. Դաւհանեանի փոխադրած յօգուտ գաղթականաց իննսուն եօթ ռուբ. 17 կոպ. (97 ռ. 17 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 մայիսի, թ. 918։

Կոնդակ օրհնութեան Վասպուրականի հայ հոգևորականութեան և ժողովրդի անունով, որով յայտնւում է նաև, որ Մայր Աթոռի միաբան Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեանը ուղարկւում է Աղթամար։ 27 մայիսի, թ. 920։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ամերիկայի Փաստրսըն Ազգային Սրահի Ընկերութեան փոխադրած վեց հարիւր վաթսուն երկու ռ. 98 կ. (662 ռ. 98 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 924։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Նիւպրիֆորդի Տիկնանց Որբանոցամ Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականաց հինգ հարիւր եօթանասուն ռուբ. 26 կոպ. (571 ռ. 26 կ.), պատուիրելով մուտք գրել մատեանում և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 925։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Արապկերի Ուսումն. Միութեան Նիւ-Եօրքի Մասնաճիւղի ուղարկած յօգուտ հայ կամաւորների երկու հազար երեք հարիւր երեսուն երեք (2333) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 926։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից Ընտանեկան հաւաքոյթի փոխադրած յօգուտ գաղթականաց երեսուն և երեք ռուբ. 46 կոպ. (33 ռուբ. 46 կոպ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 927։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Քէսերիկ գիւղացւոց Խարբերդի երկսեռ դպրոցների Վարչութեան փոխադրած յօգուտ հայ կամաւորների մի հազար մի հարիւր եօթանասուն չորս (1174) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 92։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Երևանի Վօլժսկօ-Կամսկի առևտրական դրամատան միջոցով Լոնդոնից փոխադրած յօգուտ գաղթականաց վեց հազար յիսուն (6050) ռուբ., պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 929։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գրոզնայի ծխական դպրոցի ուսուցիչ Ռ. Տաքաբեանի փոխադրած յօգուտ գաղթականաց մի հարիւր տասն և երկու (112) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 930։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Լովէլի Տիկնանց Եկեղեցասէր Միութեան փոխադրած յօգուտ գաղթականաց մի հարիւր տասն և վեց ռուբ. 25 կոպ. (116 ռ. 25 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մայիսի, թ. 931։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին վճարել ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին գաղթականաց գումարից յիսուն հազար (50,000) ռուբլի։ 29 մայիսի, թ. 932։

Նորին Սրբութեան մակագրութիւն Երևանի Փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի 1914 թ. սեպտեմբերի 16-ի թ. 1928 յայտարարութեան վրայ. «Ի նկատի ունենալով այս տարուայ ժողովրդի տնտեսական նեղ վիճակը, պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին Դպրոցական ֆօնդի գումարի տոկոսներից մի հազար (1000) ռուբլի նպաստ տալ, Երևանի Փոխ-թեմակալի միջոցով, Համզաչիմանի, Բուղդաշէնի, Մօլլաբայազիտի, Աւանի, Արամուսի և Առինջի եկեղեցական ծխական դպրոցներին»։ 29 մայիսի, թ. 940։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի միջոցով ստացուած՝ Խարբինից, պ. Գրձելեանից յօգուտ հայ կամաւորների 165 ռուբլի, Կերչի քաղաքապետից յօգուտ գաղթականաց — 2015 ռուբլի և Սրմաւրի Հայոց Բարեգործական Ընկերութիւնից 400 ռուբլի (որից 200 ռուբլին յօգուտ գաղթականաց, իսկ 200 ռուբլին յօգուտ որբ երեխաների ապաստարանին), պատուիրելով մուծել մտից մասեան առանձին-առանձին և իւրաքանչիւրին առանձին անդորրագիր ուղարկել։ 30 մայիսի, թ. 942։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Մակուի Տ. Արսէն քահանայի անունով, որով, Ատրպատականի թեմական Առաջնորդի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց։ 2 մայիսի, թ. 779։

ԿԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի 1914 թ. մարտի 12-ի, թ. 1254 յայտարարութիւնը — 1913 թ. վիճակային և օտարին արդեանց մատեանների գնութեան մասին՝ որոշեց. պատուիրել Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային նախ՝ անմիջապէս փոխադրել Սինօդ թէ 1913 թ. և թէ 1914 թ. վիճակային արդեանց ցնացորդները, երկրորդ՝ ստանալ Տփխիսի եկեղեցիների հոգաբարձութիւնից Տ. Մեսրոպ եպիսկոպոսի ընդունելութեան համար փոխարինաբար վճարած յիսուն (50) ռուբլին և մուտք գրել 1915 թ. մատեանում. երրորդ՝ անմիջապէս ուղարկել Տպարանի Վարչութեան տպարանական բոլոր գումարները. չորրորդ՝ ճշտութեամբ կատարել Սինօդի 1911 թ.